Ամփոփելով վերոգրյալը, սույն գործի փաստերի և իրավակարգավորման պայմաններում, Դատարանն արձանագրում է, որ Պատասխանողի կողմից չեն ներկայացվել ապացույցներ Վիճարկվող գործողությունների (անգործության) հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու համար, հետևաբար հայցվորի կողմից ներկայացված հայցը ենթակա է բավարարման՝ վերը նշված պատճառաբանություններով:

6.Դատական ծախսեր.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի՝ Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում՝ գրավոր միջնորդության տեսքով: Նման պահանջից հրաժարվելու կամ այդ կարգը չպահպանելու դեպքում դատական ծախսերի հատուցման հարցը համարվում է լուծված:

Նույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հայցվոր ընկերության կողմից ներկայացված հայցապահանջով վճարվել է պետական տուրքի գումար 22.000 ՀՀ դրամ:

Հայցվորը խնդրել է Պատասխանողից հօգուտ «Օրանժ Գրուպ» ՍՊԸ-ի բռնագանձել նախապես վճարված պետական տուրքի գումարը՝ 22.000 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև փաստաբանի խելամիտ վարձատրության գումարը՝ 200.000 ՀՀ դրամի չափով, սակայն չի ներկայացրել փաստաբանի կամ փաստաբանական կազմակերպությանը վճարված կամ վճարման ենթակա գումարների վերաբերյալ հիմնավորումներ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի՝գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության ծախսեր են համարվում նաև փաստաբանական կազմակերպություններին վճարված կամ վճարման ենթակա գումարները:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-194 հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

Հայցը բավարարել.

ՀՀ ներքին գործերի նախարարությանը պարտավորեցնել ընդունելու՝ 06.06.2024թ. կնքած պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման թիվ ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲԾԻՆ/2024/Հ-29 պայմանագրով «Օրանժ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից իրականացված ՀՀ ՆԳՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ Հրազդանի հրշեջ-փրկարարական ջոկատի հենակետի ընթացիկ շինվերանորոգման աշխատանքները /մասնավորապես՝ հատակի և միջնորդային պատերի քանդման աշխատանքներ, դռների և պատուհանների ապամոնտաժում, առաստաղի, տանիքի քանդում, շին. աղբի բարձում, տեղափոխում, տանիքի վերանորոգման աշխատանքներ, պատերի առաստաղի, հատակի վերանորոգման աշխատանքներ, դռների, պատուհանների տեղադրում, էլեկտրատեխնիկական մասի աշխատանքների իրականացում/:

ՀՀ ներքին գործերի նախարարությունից հօգուտ «Օրանժ Գրուպ» ՍՊ ընկերության բռնագանձել 22.000 ՀՀ դրամ՝ որպես վճարված պետական տուրքի գումար։

Կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև վճռի կատարումը։

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

Վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին։

Դատավոր՝ **Նաիրա Ավետիսյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am